# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք.
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,05,,դեկտեմբերի 2014 թվականի N 34

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 11 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 33 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին;

2.Նուռնուս համայնքի վարչական տարածքում գտնվող ,, Կարապիծոր,, լիթոիդային պեմզայի հանքավայրի շահագործումն սահմանված կարգով իրականացնելու մասին:

3. Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ենթավարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին:

4. Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրային նշանակության հողը և շինություններն ուղղակի կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք,
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# ՈՐՈՇՈՒՄ

,,05,,դեկտեմբերի 2014 թվականի N 35-Ն

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նուռնուս համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 10 նիստի որոշումների մեջ արձանագրված թերությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանի 2014 թվականի նոյեմբերի 21-ի N07/15.1/4591-14 գրությունը ու հաշվի առնելով, որ N33 որոշումն ունի նորմատիվ բնույթ, համայնքի ավագանին

որոշում է.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 10-ի « Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 12-ի «Նուռնուս գյուղական համայնքի 2014 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին» N51-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»» N33 որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման համարից հետո նշել ,,Ն,, տառը՝ N33-Ն:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք.
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

,,05,,դեկտեմբերի 2014 թվականի N 36

### ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ,,ԿԱՐԱՊԻՃՈՐ,, ԼԻԹՈՒԴԱՅԻՆ ՊԵՄԶԱՅԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված| 20-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի 2014թվականի նոյեմբերի 28-ի նիստ| արձանագրությունը Նուռնուս համայնքի տարածքում գտնվող ,,Կարապիճոր,, լիթոիդային պեմզայի հանքավայր| շահագործումն սահմանված կարգով իրականացնելու նպատակով համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդերքօգտագործման իրավունք ստանալուց հետո «ԷՄ ԷԼ ՄԱՅՆԻՆԳ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Նուռնուս համայնքում հողատարածքի տրամադրման և արդյունահանման վերաբերյալ տալ նախնական համաձայնություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք,
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

,,05,,դեկտեմբերի 2014 թվականի N 37

### ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Նուռնուս համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքի վերաբերյալ 2005 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքի Ջրաշատ 62-10 տան բնակիչ Ալեքսանդր Չիտյանի հետ 25/քսանհինգ/ տարի ժամկետով կնքված վարձակալության պայմանագիրը/փոփոխված 2006 թվականի նոյեմբերի 17-ին/ և նրա ժառանգորդ Սուսաննա Գագիկի Սամվելյանի /հիմք. վարձակալության իրավունքի վկայական N 05122014-07-0053/ դիմումը, համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Սուսաննա Գագիկի Սամվելյանին. Նուռնուս համայնքի սեփականություն հանդիսացող, իրեն վարձակալության տրամադրված 07-051-0000-0000 կադաստրային ծածկագրով հողատարածքը տրամադրելու ենթավարձակալության:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս գյուղական համայնք.
Հասցե՝ Գլխավոր փողոց թիվ 15
Հեռախոս 0222 6 84 51
Էլ. փոստ՝ nurnus@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

,,05,,դեկտեմբերի 2014 թվականի N 38

### ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1- ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման հավելվածի 33.1 հոդվածի ա)կետի, 34.2 հոդվածի 1-ին մասի, 2003 թվականի ապրիլի 17-ի որոշման հավելվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքի միջոցով, Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող /սեփականության վկայական N09122014-07-0008/ բնակավայրային նշանակության, 07-051-0132-0037 կադաստրային ծածկագրով, 0.029962հա հողամասը կադաստրային արժեքով՝ 242 692 /երկու հարյուր քառասուն երկու հազար վեց հարյուր իննսուն երկու /դրամ, S=1.3ք.մ. մակերեսով այգետնակը 4290/չորս հազար երկու հարյուր իննսուն / դրամ, S=3.0ք.մ. մակերեսով պարիսպը և S=61,5ք.մ. մակերեսով ծածկը 141 900 /հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր /դրամ ,ընդամենը՝ 388 882/երեք հարյուր ութսուն ութ հազար ութ հարյուր ութսուներկու/ դրամ արժեքով օտարել նախապատվության իրավունք ունեցող քաղաքացի Սամվել Վանիկի Աղաջանյանին:

Կողմ (3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ